ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՃԵՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն անվանի կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Ալեքսանդր Աճեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.45 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՃԵՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Ալեքսանդր Աճեմյանը ծնվել է 1925 թվականի օգոստոսի 25-ին, Թիֆլիսում:

1955 թվականին ավարտել է Երևանի կոնսերվատորիան, 1971-1987 թվականներին դասավանդել է նույն կոնսերվատորիայում:

Հեղինակ է յոթ սիմֆոնիաների, որոնց մեջ կան նաև ծրագրային բնույթի սիմֆոնիաներ՝ «Սասունցի Դավիթ» (5-րդ), «Յոթ երգ Հայաստանի մասին»՝ ըստ Գևորգ Էմինի (6-րդ): Նրա գրչին են պատկանում «Հովվերգական սիմֆոնիետ», «Ռեքվիեմ», Հովհաննես Թլկուրանցու խոսքերով վոկալ շարք:

Ալեքսանդր Աճեմյանը հայ երաժիշտներից առաջինն էր, որ սիմֆոնիկ նվագախումբ մտցրեց մարդկային ձայն (սոպրանո), ինչպես օրինակ՝ նրա երկրորդ սիմֆոնիան: Նրա սիմֆոնիկ գործերը կատարել են աշխարհի բեմերում այնպիսի հանրահռչակ նվագախմբերի կողմից, ինչպիսիք են՝ Բեռլինի սիմֆոնիկը և նշանավոր Գևանդհաուսը:

Ալեքսանդր Աճեմյանին հոգեհարազատ էր նաև երգի տարերքը: Նա հեղինակ է հուզական և քնարական բազում երգերի՝ «Երանի թե», «Մոռացում չկա», «Սիրո հասակ», «Տոնական» և այլն:

Ալեքսանդր Աճեմյանը ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Վարդան Աճեմյանի և Արուս Ասրյանի որդին է, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Վարդան Աճեմյանի հայրը:

1975 թվականին արժանացել է ՀՀ պետական մրցանակի: 1965 թվականին՝ արվեստի վաստակավոր գործչի, իսկ 1984 թվականին՝ ժողովրդական արտիստի կոչումներին:

Ալեքսանդր Աճեմյանը մահացել է 1987 թվականին:

Կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Ալեքսանդր Աճեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.45 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ քաղաքացի Վարդան Աճեմյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում

պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՃԵՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ալեքսանդր Աճեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՃԵՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ալեքսանդր Աճեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ